



# ՍՈՒՐԲ ԶԱԿՈԲ Առաջնորդական Մազր Եկեղեցի

Խաղաղութեան Եօք Հրագերորդ Կրտսեր  
20 Հոկտեմբեր 2024

## ԸՆԹԵՐՑՈՒՄ ԵՍԱՅԻ ՄԱՐԴԱՐԵՒ ԳՐՔԵՆ (20.1-21.6)

Ասորեստանի Սարգոն թագաւորին հրամանով Տարաթան հրամանատարի Ազոտոս գալէն եւ պատերազմով զայն գրաւելէն երեք տարիներ առաջ, Տէրը հետեւեալ պատուէրը տուաւ Ամոսի որդի Եսայիին. «Գնա՛ հագուստդ վրայէդ հանէ եւ հողաթափդ ալ՝ ոտքերէդ»։ Եսայի մարգարէ ըսուածը կատարեց եւ սկսաւ մերկ ու բոպիկ պտըտիլ։ Տէրը այսպէս ըսաւ. «Ահա երեք տարի է որ իմ ծառաս՝ Եսայի մերկ ու բոպիկ կը պտըտի։ Ատիկա նշան եւ օրինակ պիտի ըլլայ եգիպտացիներուն եւ եթովպացիներուն համար։ Թող հասկնան թէ ճիշդ այդպէս Ասորեստանի թագաւորը գերի պիտի տանի եգիպտացիներն ու եթովպացիները, ծեր թէ երիտասարդ, բոլորն ալ մերկ ու բոպիկ, իրենց ամօթոյքն ալ բաց, որպէսզի խայտառակուի եգիպտոսը։ Պարտութեան մատնուած եգիպտացիները ամօթ պիտի զգան եթովպացիներուն համար, որոնց վրայ դրած էին իրենց յոյսը. որովհետեւ եթովպացիներն էին եգիպտոսի վրայ իշխողը։ Այն օրը փղշտացիները պիտի ըսեն. “Մենք ասոնց օգնութեան ապաւինած էինք, մինչդեռ ասոնք նոյնիսկ իրենք զիրենք չկրցան ազատել Ասորեստանի թագաւորէն. մե՞նք ինչպէս պիտի ազատինք”։ Բարելոնի վերաբերող պատգամը. - Անապատէն անցնող մըրիկի պէս

փոթորիկ մը կու գայ ահա անապատ երկրէն։ Ահաւոր է տեսիլքը, եւ ինձի յայտնուածը՝ սարսափելի։ Ահա աւերողը կ’աւերէ, անիրաւողը կ’անիրաւէ։ Տեսիլքիս մէջ ելամացիները վրաս յարձակեցան, պարսիկ պատգամաւորները իմ վրաս եկան։ Փոխանակ գիշերը հանգիստով անցընելու, հեծեցի. սիրտս դողով լեցուեցաւ, երկունքը զիս բռնեց ծննդական կնոջ մը պէս։ Կծկուեցայ որ չլսեմ, ջանացի չտեսնել. միտքս մոլորեցաւ, շփոթութեան մէջ ընկղմեցայ եւ վախը զիս պատեց։ Տեսայ խնճոյքի սեղան մը դրուած. կ’ուտէին ու կը խմէին, մինչ անդին դէտեր պահակ կեցած էին։ Եւ ահա լսուեցաւ. “Ելէ՛ք, իշխաններ, ձեր վահանները առէք”։ Եւ Տէրը ինձի ըսաւ. «Գնա դո՛ւն ալ անձամբ դէտ կեցիր, եւ ինչ որ տեսնես՝ պատմէ»։

ՊՈՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ  
ԳԱՂԱՏԱՑԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ  
ՆԱՄԱԿԵՆ  
(4.3-18)

Որքան ատեն որ հոգեւորապէս անչափահաս էինք՝ բնութեան ոյժերուն կ’ենթարկուէինք ու կը ծառայէինք։ Բայց հիմա յարմար ժամանակը հասած համարելով, Աստուած աշխարհ դրկեց իր Որդին որ մարդկային մօրմէ մը ծնաւ եւ Մովսիսական Օրէնքին տակ ապրեցաւ, որպէսզի մեզ օրէնքին գերութենէն փրկէ եւ Աստուծոյ որդիներ դարձնէ։ Արդ, որովհետեւ իր որդիներն ենք՝

Աստուած մեր սիրտերուն մէջ զրկեց իր  
Որդիին Հոգին, որով զԱստուած «Հայր»  
կը կոչենք: Ուստի այլեւս ծառայ չէք,  
այլ որդի. եւ քանի որդի էք՝ Աստուծոյ  
խոստումը պիտի ժառանգէք:

Ճիշդ է որ նախապէս երբ զԱստուած  
չէք ճանչնար՝ չաստուածներու կը  
ծառայէիք: Բայց հիմա որ զԱստուած  
ճանչցաք եւ մանաւանդ Աստուած ալ ձեզ  
ճանչցաւ, ինչպէ՞ս կրկին կը վերադառնաք  
բնութեան տկար ու խեղճ ոյժերու  
պաշտամունքին եւ վերստին կ'ուզէք  
անոնց ծառայել. յատուկ կարեւորութիւն  
կու տաք որոշ օրերու եւ ամիսներու, որոշ  
ժամանակներու կամ տարիներու: Կը  
վախնամ որ ձեզի համար տարած ամբողջ  
աշխատանքս զուր անցած ըլլայ:

Կը խնդրեմ, եղբայրներ, ինձի պէս  
եղէք, որովհետեւ ես ալ ժամանակ մը  
ձեզի պէս էի:

Զեզի դէմ բնաւ գանգատ մը չունիմ:  
Ընդհակառակը, հարկաւ կը յիշէք թէ  
սկիզբը երբ աւետարանը ձեզի քարոզելու  
եկայ, տկար էի մարմնով. եւ հակառակ  
անոր որ հիւանդ վիճակովս փորձանք  
եղայ ձեզի, չանարգեցիք զիս, ոչ ալ  
արհամարհեցիք. այլ զիս ընդունեցիք  
այնպէս՝ ինչպէս Աստուծոյ հրեշտակը  
կամ Յիսուս Քրիստոսը պիտի ընդունէիք.  
եւ ուրախութեամբ ըրիք ատիկա: Հիմա  
ի՞նչ պատահեցաւ: Կրնամ վկայել ձեզի  
համար, որ եթէ կարելի ըլլար՝ ձեր  
աչքերը կը հանէիք եւ կու տայիք ինձի:  
Միթէ ճշմարիտը խօսած ըլլալուս համար  
թշնամի՞ եղայ ձեզի: Մի՛ կարծէք թէ ձեզի  
հանդէպ մասնաւոր հետաքրքրութիւն  
ցուցաբերող մարդիկը ձեր բարիքը կը  
խորհին: Ո՞չ: Անոնք կ'ուզեն ձեզ ինձմէ  
բաժնել, որպէսզի ամբողջութեամբ իրենց  
հետեւիք: Բայց երանի տեւաբար բարիին  
նախանձախնդիր ըլլայիք, եւ ոչ միայն  
երբոր ես ձեր մէջ ներկայ եմ:

## ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԻՆ ԸՍ ՂՈՒԿԱՍԻ (4.14-24)

Յիսուս Գալիլիա վերադարձաւ Սուրբ  
Հոգիին զօրութեամբ, եւ ամբողջ գաւառին  
մէջ իր համբաւը տարածուեցաւ: Անոնց  
ժողովարաններուն մէջ կ'ուսուցանէր՝  
արժանանալով բոլորին հիացումին եւ  
գովասանքին:

Եկաւ նազարէթ քաղաքը, ուր մեծցած  
էր, եւ իր սովորութեան համաձայն  
Շաբաթ օրը ժողովարան գնաց: Երբ ոտքի  
ելաւ կարգալու օրուան ընթերցուածը,  
իրեն տուին եսայի Մարգարէին գիրքը:  
Բացաւ եւ գտաւ այն տեղը ուր կ'ըսէր.

“Տիրոջ Հոգին վրաս է. որովհետեւ օծեց  
զիս եւ ղրկեց՝ աղֆատներուն փրկութեան  
աւետիս տալու, սրտաբեկները միխթա-  
րելու, աւետելու՝ թէ գերիները պիտի  
ազատագրուին, կոյրերուն աչքերը պիտի  
բացուին, հարստահարուածները պիտի  
ազատին. եւ յայտարարելու թէ ահա  
հասած է ժամանակը երբ Տէրը պիտի փրկէ  
իր ժողովուրդը”:

Ապա գիրքը գոցեց, տուաւ պաշտօնեային  
եւ նստաւ: Ժողովարանին մէջ գտնուողնե-  
րուն բոլորին աչքերը իրեն սեւեռած էին,  
երբ ըսաւ. «Այս մարգարէութիւնը որ  
դուք լսեցիք, ահա այսօր իրականացաւ»: Ամէնքն ալ տպաւորուած էին իրմէ, եւ  
հիանալով անոր շնորհալի խօսքերուն  
վրայ, կ'ըսէին. «Այս մարդը Յովսէփի որդին  
չէ՞»: Յիսուս ըսաւ. «Անտարակոյս ինձի  
պիտի ըսէք հետեւեալ առածը. “Բժիշկ,  
դուն քեզ բժկէ”»: Եւ պիտի ըսէք. “Ինչ որ  
լսեցինք թէ գործեր ես Կափառնաումի մէջ,  
այստեղ՝ քու քաղաքիդ մէջ ալ կատարէ”»:  
Եւ աւելցուց. «Բայց դուք ալ գիտէք, որ  
մարգարէն իր ծննդավայրին մէջ յարգ  
չունի»: